

րեաւ եւ նստաւ ընդ աջմէ հօր՝ ըստ կանխասացու-
թեան Գաւթայ, որով եւ գալոց է գատել զկեն-
դանիս եւ զմեռեալս, որում հաւատացեալ սպա-
սեմք եւ ակնունիմք յարութեան եւ դատաստանի
եւ հատուցման գործոց: Ընդ նմին եւ խոստովա-
նիմք զՄարիամ մայրն Յիսուսի՝ Աստուածածին,
որպէս եւ Քնեւի Աստուած, եւ զնոյն ի խաչ ելեալ,
ըստ Գրիգորի Աստուածաբանին որ ասէ յԱռ որս
գիրսն, եթէ ով զՄարիամ Աստուածածին ոչ
իմանայցէ՝ հեռի է յԱստուածութենէն, եւ եթէ
ոք խաչելոյն երկիր ոչ պագանէ՝ նղովեալ եղիցի
է- ի-ր-բ-ե-ցի ընդ Ա-ս-տ-ւ-ած-ա-ս-տ-ու-ն-ն: Ե- ի- ն-ն այսօր
այստէ ի ի-ր-ճոյ: Հաւատամք եւ ի Հոգին սուրբ
Աստուած կատարեալ ա-ռ-ն-ց ա-ռ-ն-ել-ոյ, բղխումն
մշտնջենաւոր առ ի Հօրէ, որ խօսեցաւ յօրէնս եւ
ի մարգարէս, եւ յԱռաքեալսն, եւ էջ յորդանան
գետ եւ ի սուրբ վերնատունն: Հոգի պետութեան
Հոգի աղաթ-ն-ն Հոգի բերանոյ Աստուծոյ նորին
է-ն-ն-ն Հօր եւ յՈրդւոյ, ոչ արարած ոչ ծա-
ռայ, ոչ հրամանաւոր, այլ հրամանատու, քանզի
մի գործ է Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, որպէս
ասաց փրկիչն աշխարհաց թէ ես եւ Հայր, եւ հո-
գին ճշմարտութեան որ ի Հօրէ ելանէ, ելանէ՝ եւ
ոչ բաժանի, բղխէ եւ ոչ սպառի, եւ ինքն է Աս-
տուած խնկեալ տիրապէս, ամենայն յամենայնի:
Հաւատամք եւ զհամաշխարահան կաթուղիկէ եկե-
ղեցի սուրբ, զթողութիւն մեղաց հաստատեալ ի
վերայ հիման Առաքելոց եւ Մարգարէից եւ Վար-
դապետաց, ըստ Պօղոսի թէ՛ զորս եղ Աստուած
յեկեղեցւոջ այս են, նախ՝ զԱռաքեալս, երկրորդ
զՄարգարէս երրորդ զՎարդապետս, եւ զի լու-
սաւոր բանիւք ոչ ոք՝ հաստատեալ մնայ սուրբ եկե-
ղեցի, անդրդուելի եւ անսասանելի յաւիտեանս
յաւիտենից: Եւ զի կառուցեալ է սա ի վիմէն
կենդանութեան, որ է ինքն Բրիտանոս Աստուած
ըստ Սողովմանի թէ, իմաստութիւն շինեաց իւր